

**Գրիգորյան Անահիտ Վլադիմիրի,  
աշխ. գիտ. թեկ., դոցենտ, ԱրՂՀ  
Թովմասյան Ռուբինա Ստեփանի, ԱրՂՀ  
E-mail: srbuhi.tovmassian@mail.ru**

**ԷՎՈԼՈՑԻՈՆՆԵՐՈՆ ԱՏՏԱՀՂԱՅՈՒՄՆԵՐ ԼՂՀ ՌԵԿՐԵԱՑԻՈՆ ՌԵՍՐՍՈՒՐՄՆԵՐԻ ԵՎ ՌԵՍՐՍՈՒՐՍՕՂՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ**

Հոդվածում ներկայացված է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ռեկրեացիոն ռեսուրսների և դրանց ռացիոնալ օգտագործման շնորհիվ ԼՂՀ-ում ինտենսիվ եղանակով ռեկրեացիոն տնտեսության զարգացման մասին հեռանկարային գաղափարներ: Դիտարկումների և ուսումնասիրությունների արդյունքում վերծանվել է էքստենսիվ փուլի թերացումները, բացահայտվել է ԼՂՀ ռեկրեացիոն պահանջարկը: Այս հիմնախնդրի լուծումը կնպաստի ոչ միայն զբոսաշրջության, այլև ԼՂՀ մյուս տնտեսական համակարգերի զարգացմանը, ինչը նաև ռազմավարական նշանակություն կունենա հանրապետության համար:

Բանալի բառեր *Ռեկրեացիոն, լանդշաֆտ, ռեսուրսօգտագործում, էքստենսիվ, ինտենսիվ, ռելիեֆ, երկրահամակարգ, անտառապուրակ, ռեկրեացիոն շրջանացում, երկրատեխնիկական:*

**Григорян Анаит Владимировна,  
кандидат географических наук, доцент, АрГУ  
Товмасын Рубина Степановна, АрГУ**

**ЭВОЛЮЦИОННЫЕ ИДЕИ О РЕКРЕАЦИОННЫХ РЕСУРСАХ НКР И О РЕСУРСОПОЛЬЗОВАНИИ**

В статье представлены перспективные идеи о рекреационных ресурсах НКР и о развитии рекреационной экономики НКР интенсивном путем с помощью рационального использования этих ресурсов. В результате наблюдений и исследований были выявлены недостатки экстенсивной стадии, а так же рекреационная потребность НКР. Решение этой проблемы поможет не только развитию туризма, но и развитию остальных экономических систем НКР, а это в свою очередь имеет стратегическое значение.

Ключевые слова - *Рекреационный, ландшафт, ресурсопользование, экстенсивный, интенсивный, рельеф, геосистема, лесопарк, рекреационное районирование, геотехнический.*

**Anahit Grigoryan  
Candidate of Geographical Sciences, Associate Professor, ArSU  
Tovmasyan Rubina – ArSU**

**EVOLUTIONARY IDEAS ON THE RECREATIONAL RESOURCES OF NKR  
AND THE RESOURCE-USE**

The perspective ideas on the intensive development of the recreational economy, through the recreational resources of Nagorno Karabakh Republic and the rational use of them, are presented in this article. In the result of observations and studies, the shortcomings of the extensive phase have been interpreted and the recreational demand of NKR has been revealed. The solution of this problem will promote not only the development of tourism, but also the development of other economic systems of NKR, which will have a strategic importance for the Republic.

Key words - *Recreational, landscape, resource-use, extensive, intensive, relief, geosystem, forest-park, recreational regioning, geotechnical.*

Տարեցտարի ընդլայնվում է ԼՂՀ ռեկրեացիոն տնտեսության մեջ նոր յուրացված տարածքների ներգրավումն՝ ընդգրկելով բազմաթիվ լանդշաֆտներ: Հանրապետությունում հանգստի կազմակերպումը պահանջում է ինտենսիվ ռեսուրսօգտագործում՝ նոր սկզբունքներով և մեթոդներով:

Ռեկրեացիոն ռեսուրսօգտագործման խնդիրների առումով առանձնացվում են հետևյալ փուլերը.

1. Էքստենսիվ փուլ. բնութագրվում է ռեկրեացիոն տնտեսության մեջ էկոհամակարգերի սահմանափակ հատկությունների օգտագործմամբ, այս փուլը ռեկրեացիոն բնօգտագործման բարդ պրոցեսի առաջին օղակն է: Հանգստի համար տարածքի ընտրությունն իրականացվում է բնակչության կողմից: Ելնելով տարածքի ռեկրեացիոն առանձնահատկություններից, կարելի է որոշել զբաղմունքի տեսակը, հարմարավետությունն ու

բարենպաստությունը: Զբոսաշրջության զարգացման համար կարևոր նշանակություն ունեն ռեյիեֆային առանձնահատկությունները, հատկապես հիմա, երբ զարգացման առավել մեծ տեմպեր ու միտումներ ունի էկոզբոսաշրջությունը, մեծանում է հետաքրքրությունը լեռնային ռեյիեֆի նկատմամբ: Արցախի միջին և բարձր լեռնային գոտիներում, որտեղ մակերևույթի թեքություններն ավելի մեծ են, առկա են V-աձև հովիտներ, կիրճեր, կանիոններ [2]: Դրանք հիանալի դիտարժան օբյեկտներ են և կարող են բազմաթիվ զբոսաշրջիկների ուշադրության արժանանալ: Դրանց ռեկրեացիոն արժեքը շատ մեծ է, սակայն շատ չնչին չափով է օգտագործվում, չնայած, որ շատ մեծ է գետերի ու դրանց հովիտների գեղագիտական նշանակությունը: Ակնհայտ է, որ այսօր՝ ռեկրեացիոն ռեսուրսների նկատմամբ պահանջարկի աճի պայմաններում, ռեսուրսների տարերային յուրացման և օգտագործման ռազմավարությունը հրամայական է: Սակայն, այս փուլում կարելի է առանձնացնել երկու տիպի պրոցես: Առաջին դեպքում էկոհամակարգը փոխվում է ինքնավերակարգավորման շրջաններում և արտաքին բեռնվածության վերացումից հետո վերականգնվում է նախկին վիճակը: Այսպիսով, այն ունի կառուցվածք և հատկություններ պահպանելու ունակություն ու շարունակում է հանդես գալ որպես ռեկրեացիոն ռեսուրս:

Պրոցեսների երկրորդ տիպի դեպքում ազդեցությունը բնական համակարգերի վրա այնքան է աճում, որ դրանք սկսվում են քանդվել, արդյունքում ռեկրեացիոն ռեսուրսների որակը վատանում է, քանակը նվազում, այսինքն տեղի է ունենում դրանց լրիվ դեգրադացիա: Սրանից էլ հետևում է, որ ռեսուրսների էքստենսիվ օգտագործումը ԼՂՀ-ում հնարավոր է միայն փոքր բեռնվածության պայմաններում: Ռեսուրսների դեգրադացիան կարող է առաջանալ ոչ միայն անթրոպոգեն ազդեցության աճի հետևանքով: Բնական գեոհամակարգերի ազդեցությամբ շարունակվում է երկրահամակարգերի ինքնուրույն զարգացումը, որն էլ արտահայտվում է կառուցվածքային վերափոխումներով: Դրանց արդյունքում բնական երկրահամակարգերը կամ դրանց բաղադրիչները, որոնք հանդես են գալիս որպես հանգստի կազմակերպման ռեսուրս, կարող են լուրջ վնասներ կրել: Առաջին փուլին բնորոշ է մասնագիտացած վերահսկողության, հատկապես կառավարման մարմինների բացակայությունը [6]:

Հանրապետության ռեկրեացիոն տնտեսության զարգացման համար խթան կհանդիսանա ռեկրեացիոն ռեսուրսօգտագործման էքստենսիվ ձևից անցումն ինտենսիվի, անցման պատճառը ռեկրեացիոն ռեսուրսների նկատմամբ պահանջարկի աճն է: Ռեկրեացիոն ռեսուրսների վրա ազդեցությունն ուժեղանում է՝ կապված տնտեսության ոչ ռեկրեացիոն ճյուղերի զարգացման, ինչպես նաև ռեսուրսօգտագործման նոր ձևերին անցման ու ռեսուրսների ոչ խնայողական օգտագործման հետ: Ռեսուրսօգտագործման բնորոշ գիծն այս փուլում դառնում է ռեսուրսների պահպանումը և վերականգնումը: Քանի որ, ԼՂՀ տնտեսական համակարգերը դեռևս լրիվ չեն ձևավորված, մասնավորապես արդյունաբերության բնագավառում, ուստի նպատակային է ռեսուրսօգտագործման ինտենսիվ փուլով ստեղծել ժամանակակից մոդուլավորումով ռեկրեացիոն տնտեսություն: ԼՂՀ-ն ունենալով փոքր տարածք, բազմաթիվ զարմանահրաշ կոթողներով, պատմամշակութային հարուստ ժառանգությամբ Արցախի աշխարհին իսկական թանգարան է բաց երկնքի տակ: Արցախում չկա մեկ բնակավայր, որ չունենա գիտությանը կամ զբոսաշրջիկներին հետաքրքրող, պատմությանը կտակած որևէ կառույց, պատմաճարտարապետական կոթող կամ եկեղեցի: Սակայն, այս ամենը անհրաժեշտ է ներկայացնել հավուր պատշաճի: ԼՂՀ-ում առկա են ենթակառուցվածքների զարգացման հիմնախնդիրները, հատկապես ճանապարհների, սպասարկման օբյեկտների, պատմաճարտարապետական կոթողների վերանորոգման և ստեղծման մեծ անհրաժեշտություն կա:

2. Ինտենսիվ փուլ. հանրապետությունում ռեկրեացիոն տնտեսության կազմակերպման ինտենսիվ փուլում կարևոր նշանակություն են ստանում շահագործման ընթացքում ռեսուրսների պահպանումը, ռեկրեացիոն և ոչ ռեկրեացիոն ծանրաբեռնվածության կարգավորումը, դեգրադացված ռեսուրսների վերականգնմանն ուղղված միջոցառումները: Երկրորդ փուլին բնորոշ են առավել էական փոփոխությունները ռեսուրսօգտագործման համակարգում, որպես պարտադիր տարր ռեսուրսների որակի վերահսկման և կառավարման մարմինների ներառումն է, որն էլ թույլ է տալիս անցում կատարելու ռեսուրսային նոր ենթահամակարգերի նաև ամբողջ տնտեսության վիճակի նպատակաուղղված և պարբերաբար ինֆորմացիայի հավաքման համար բնական երկրահամակարգերի էլակետային վիճակի վերականգնման մեթոդների և ուղիների հիմնավորված որոշումների կայացմամբ: Չնայած երկրահամակարգերը հանրապետության տարածքում շարունակում են օգտագործել որպես ռեսուրսներ, սակայն ազդեցությունը բնության վրա իրականացվում է արդեն որոշակի հսկողությամբ և առաջին հերթին ղեկավարվում է բեռնվածության կարգավորմամբ, իսկ երկրորդ հերթին բեռնվածության արդյունքում վնասված ռեսուրսների վերականգնմամբ:

Հանրապետության տարածքում ռեկրեացիոն ռեսուրսօգտագործումը դառնում է ծրագրավորման օբյեկտ: Այս պրոցեսը պետք է իրականացնել հետևյալ կերպ՝ տեխնիկական կառույցները և գործողության որոշակի տեսակներն ինտեգրել բնությանը, հետագոտել երկրահամակարգերի առանձին բաղադրիչների դիմացկունությունը, որոշակի բեռնվածությանը, հաշվի առնել հանրապետության տարածքային առանձնահատկությունները և հանգստի հարմարավետ պայմանների ստեղծությունը: Այստեղ մեծ դեր կունենա հանգստի համար անհրաժեշտ ռեկրեացիոն ռեսուրսների գնահատումն առաջին հերթին հարմարավետության տեսանկյունից (ֆիզիոլոգիական, հոգեբանական և տեխնոլոգիական): Մեծ ուշադրություն պետք է դարձվի ռեկրեացիոն գործունեության պայմանների գնահատմանը: Քանակական գնահատման մեթոդներից պետք է անցնել նաև որակականին, որն էլ կհանգեցնի բնագիտական ինֆորմացիայի բնույթի և ձևերի մասին պատկերացումների հարստացմանը [1]: Հանգստի պայմանների

հարմարավետության գնահատման առումով հանրապետության ռեսուրսային պոտենցիալը բավարար է հզոր ռեկրեացիոն տնտեսության ստեղծման համար:

Արցախի տարածքը շատ հնուց հայտնի է ոչ միայն տաք, այլև սառն հանքային ջրերով, դրանցից առավել հանրահայտը Շուշի քաղաքից ոչ մեծ հեռավորության վրա գտնվող «Երկաթաջուրն» է [5]: Դրա վրա առանձնահատուկ ուշադրություն է հրավիրել Մակար Բարխուդարյանը դեռ անցյալ դարում:

Ռեկրեացիոն ռեսուրսները ընդունված է բաժանել մի շարք տեսակների՝ առողջարարական, զբոսաշրջային-մարզական, զանգվածային տեղական հանգստի և այլն:

Նշված առանձնահատկությունների տեսակետից կարևոր դեր կարող են ունենալ Շուշիի շրջանը, Հաղորթի շրջանի հյուսիսային մասը՝ Տումի – Ազոխ – Դրախտիկ գոտին, Մարտակերտի շրջանի Քոլատակ գյուղի հանգույցն ու Թարթառ գետի միջին ավազանը:

Զանգվածային հանգստի համար շատ նպաստավոր են Թարթառ, Խաչեն, Ինջա, Կարկառ, Վարանդա, Խոնաշեն գետերի միջին և վերին հոսանքների գեղատեսիլ անտառածածկ ավազանները, Մարսանգի ջրամբարը, բոլոր շրջաններում առկա բարձրադիր անտառածածկ սարավանդները:

Զբոսաշրջային-մարզական ինդուստրիայի կազմակերպման համար շատ նպաստավոր պայմաններ ունեն Դարբաղի լեռնաշղթայի, Մռավի լեռնաշղթայի ու դրանց բազմաթիվ լեռնաճյուղերի բարձրադիր գագաթները (Գոմշասար, Մռավ, Քառասուն աղջիկ, Մեծ Քիրս, Փոքր Քիրս, Դիզափայտ, Բովուրխան), լեռնազանգվածների լանջերը, որոնք տարվա զգալի մասը ձյունածածկ են լինում և հարմար են նաև դահուկային մարզաձևի համար:

Այդ տեսակետից մեծ հետաքրքրություններ են ներկայացնում նաև Թարթառ, Կարկառ, Իշխանագետ, Վարանդա գետերի անդնդախոր կիրճերը, ջրվեժները, բազմատեսակ քարանձավային համալիրները (առավելապես Ազոխի շատ եզակի քարանձավային համալիրը, այդպիսիք կան նաև Հունտտի կիրճում, Բերդաձորում, Թարթառի հովտում):

Ինչպես զանգվածային հանգստի, այնպես էլ զբոսաշրջային-մարզական ինդուստրիայի կազմակերպման համար լավ նախապայմաններ են Ամարասի, Գանձասարի, Դաղիվանքի, Գոչավանքի, Մայրաբերդի, Շուշիի ու ԼՂՀ տարածքի հատկապես նախալեռնային ու լեռնային վայրերում գտնվող հսկայական հնագույն բազմաթիվ համալիրները: Դրանք բոլորն էլ պատմագիտական, ճանաչողական մեծ հետաքրքրություն ներկայացնող մարդածին ռեկրեացիոն ռեսուրսներ են, որոնցից առանձնահատուկ ուշադրության են արժանի Ամարասի և Գանձասարի համալիրները [3, 4]:

ԼՂՀ-ում ռեսուրսագտագործումն ինտեսիվ եղանակով կարող է իրականացվել ինֆորմացիոն և կառավարման բլոկների ներդրմամբ, լայն մասշտաբների միջոցառումների կիրառմամբ ռեսուրսների վերափոխման ու վերականգման ուղղությամբ ռեկրեացիոն ռեսուրսագտագործման սկզբունքային նոր մոտեցումների մշակմամբ: ԼՂՀ տարածքային առանձնահատկություններից ելնելով, ինտեսիվ ռեսուրսագտագործումը կարելի է բաժանել երկու փուլի: Առաջին փուլում առաջնորդող դերը շարունակում են կատարել վերափոխիչ տեխնոլոգիական միջոցառումներն՝ ուղղված գոյություն ունեցող երկրահամակարգերի կամ դրանց առանձին բաղադրիչների վերակառուցմանը, վերածմանը ռեկրեացիոն ռեսուրսների, կամ էլ դրանց արժեքավոր հատկությունների գնահատմանը: Օրինակ կարող է ծառայել Մարտակերտի շրջանի Ալաշանի անտառային տարածքի վերածումը անտառապուրակի, Թարթառ գետի ռեկրեացիոն նպատակներով օգտագործումը և այլն: Երկրորդ փուլին բնորոշ են ռեկրեացիոն ռեսուրսագտագործման սկզբունքայնորեն նոր մոտեցումները: Արհեստական երկրահամակարգերի ստեղծումը և օգտագործումը հետապնդում է մի շարք նպատակներ:

1. Հանգստի առավել հարմար միջավայրի ստեղծում կապված ռեկրեացիոն պահանջարկի հետ:

2. Ռեկրեացիոն ռեսուրսների և դրանց սահմանակից տարածքներում բացասական փոփոխությունների չեզոքացմանն ուղղված միջոցառումների իրականացում:

3. Նյութատեխնիկական երկրահամակարգերի ստեղծման և գործունեության պրոցեսով պայմանավորված նեգատիվ հետևանքների կանխում կամ չեզոքացում:

Ռեկրեացիոն ռեսուրսների համեմատական կայուն բացասական փոփոխության օրինակ կարող են ծառայել Արցախում զանգվածային անտառահատումները: Հանրապետության տարածքում ռեկրեացիոն ռեսուրսագտագործման հետագա զարգացումը նշանակալի չափով պետք է միտված լինի առավել կատարյալ երկրատեխնիկական համակարգերի ստեղծմանը՝ չվերապահելով ժամանակային սահմաններ, քանի որ երկրատեխնիկական համակարգերի կատարելագործման ու դրանց էկոլոգիական և ռեկրեացիոն արժեքների բարձրացման առավել էժան կոնստրուկցիաների ստեղծման պրոցեսն անսահմանափակ է: Ռեկրեացիոն ռեսուրսագտագործման արդյունավետությունը կբարձրացնի հանրապետությունում կառավարման ենթահամակարգերի կատարելագործումը, որը ներառում է նաև վերահսկողության բլոկը ռեկրեացիոն հզոր տնտեսության ստեղծման ու շահագործման համար: ԼՂՀ-ում ռեկրեացիոն հզոր տնտեսության և ռացիոնալ ռեսուրսագտագործման բնագավառում մեծ դեր կխաղա աջակցման և պահպանման պրոցեսների ինտեգրումը: Հանրապետության համար խիստ անհրաժեշտ է ստեղծել ռեկրեացիոն շրջանացման սխեմա, քանի որ ռեկրեացիան յուրաքանչյուր տարածքում յուրահատուկ է, և նրա զարգացման ընթացքը չունի անալոգ, ուստի շրջանացման սխեման պետք է կազմել՝ հաշվի առնելով տվյալ տարածքի, տվյալ շրջանի բնական պրոցեսների յուրահատկությունները: Հաճախ ավելի բարձր գնահատվում են ոչ թե այն երկրահամակարգերը, որոնք արդեն այդ

պահին կարելի է օգտագործել հանգստի համար, այլ նրանք որոնք փոքր ծախսերով կարելի է վերածել արժեքավոր հատկանիշներով և բազմազան ռեսուրսներով հազեցած երկրահամակարգերի:

Այսպիսով՝ ռեսուրսօգտագործման պրոբլեմի լուծումը և բարգավաճ ռեկրեացիոն տնտեսության արդյունքում ստացված եկամուտներից ԼՂՀ-ում կարող են հեռանկարային զարգացում ունենան տնտեսական համակարգերն ու ենթահամակարգերը: Այս պրոբլեմը հանրապետության համար ունի ռազմավարական նշանակություն, քանի որ հանրապետության տնտեսական զարգացումը կնպաստի նաև նրա միջազգային ճանաչմանը:

#### **Գրականություն**

1. Աջամողյան Ա., Սամվելյան Ն., Ռեկրեացիոն աշխարհագրություն, մաս 1, Երևան, 2015թ., 135 էջ
2. Առաքելյան Յու. Մնացականյան Բ. «ԼՂՀ և հարակից տարածքների ջրագրությունը և ջրային հաշվեկշիռը» Երևան 2005թ. 191 էջ
3. Մկրտչյան Շ., «Լեռնային Ղարաբաղի պատմաճարտարապետական հուշարձանները», Երևան, 1985թ., 354 էջ
4. Մելքումյան Ս. Ա., ՀՀ և ԼՂՀ տնտեսական և սոցիալական ախարհագրություն, Երևան-2014թ, 550 էջ
5. Габриелянц Г.А, Джрбашян Р. Т Геология и минеральные ресурсы НКР, Ереван- Степанакерт, 2011г, 286 էջ
6. Максакровский В. П., Географическая картина мира, книга 1, Москва, 2008г, 584 стр.